ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12 հեռ. (+ 374 10) 34 04 44
(+ 374 10) 34 51 10
(+ 374 10) 57 57 01
ֆաքս (+ 374 10) 34 94 17
էլ. փոստ ph@ph.am

31.03.15 N 93/44

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք:
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՎԿԱԿ-2015-14»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Մ.Հերացի 12 շենք, 2-րդ հարկ, մինչև 2015թ. ապրիլի 15-ը ժամը 11:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է համձնաժողովի քարտուղար Լ. Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Մ.Հերացի 12 շենք, 2-րդ հարկ հասցեում, 2015թ. ապրիլի 15-ին ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ շինանյութերի ձեռքբերումը: ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային

կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ շինանյութերի մատակարարման (որը կազմված է՝ 135 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 10 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumnerhvkk@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Գրիգորյանը
ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ
Հեռ. 010 57 57 01